# ԱԶԴ

Մինչև ամսագրի իրաւունք ստանալը մեր բաժանորդներից շատերը նորոգել էին բաժանորդագրութիւնը հին հաշւով՝ ուղարկելով խմբագրութեանս 6-ական ռուբլի։ Հարկաւոր ենք համարում յիշեցնել այդպիսիներին, որ անմիջապէս լրացնելու են բաժնէգինը, **ՈՒՂԱՐԿԵԼՈՎ ՊԱԿԱՍՈՐԴ 2 ՌՈՒԲԼԻՆ**։ Ոմանք արտասահմանից ուղարկել են մեզ 6 ռուբլի բաժնէգին, այդպիսիներին և առհասարակ արտասահմանից բաժանորդ գրւողներին միանգամ ընդ միշտ յայտնում ենք, որ «Լումայի» բաժանորդավճարն այնտեղ արժէ **27** ֆրանք։

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

—

1. Խմբագրութիւնը ոչ մի չը տպուելու յօդուած չի վերադարձնում. ցանկացողները յետ ստանալ՝ կամ պէտք է իրենք դիմեն յետ ստանալու եւ կամ ուղարկեն փոստի ծախսը:

2. Խմբագրութիւնը իրաւունք ունի հարկաւոր դէպքում փոփոխել կամ կրճատել տպագրուելի յօդուածները:

3. Խմբագրութեան ուղարկած յօդուածները պէտք է լինեն գրուած մաքուր, պարզ եւ մի երեսի վերայ. մանաւանդ պարզ պէտք է գրել յատուկ անուններն ու օտարազգի բառերը:

4. Խմբագրութիւնը իրաւունք ունի բոլոր յօդուածները ենթարկել իւր ուղղագրութեան:

5. Թարգմանական յօդուածների հետ միշտ պէտք է ուղարկել եւ բնագիրը, առանց որի ոչ մի թարգմանութիւն չի կարող տպուել:

6 Խմբագրութեան զանազան հարցերով դիմողները պարտաւոր են ուղարկել պատասխանի համար նամակադրոշմ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 50 կոպէկ դրամով կամ նամակադրոշմով:

8. «Լումայի» որեւէ համար չը ստանալու դէպքում պէտք է յայտնել խմբագրութեանս առանձին նամակով մի ամսուայ ընթացքում, որպէս զի կարողանանք պատշաճաւոր դիմում անել փոստային վարչութեան։